

## **Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2019 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2019 թվականի առաջին կիսամյակում, համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Արենիի, Աղավնաձորի, Գլաձոր և Ռինդ համայնքներում՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 223.5 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 55.0հա , պտղատու այգի 19.5 հա, 149.0 վարելահող, որոնք էլ կարծածվեն մարզի 2019 թվականի հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 14 առաջարկություններ, որից 6-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որոնք էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքի ղեկավարներին, մնացած 8-ը ընթացքի մեջ են:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի Գլաձոր և Մալիշկա համայնքներում, հայտնաբերված թերությունների վերացման համար առաջարկություն է ներկայացվել և հստակ ժամկետ տրվել:

Հետևողական ենք եղել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվեն՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ենք ներկայացրել Ջերմուկի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարում, որոնք ընթացքի մեջ են:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ 1-ը հուլիսի 2019թ օտարվել է 82.7 հա, 13.8 միլ. դրամ.գումարով, վարձակալության է տրամադրվել 2700 հա՝ կնքվել են 25 վարձակալական պայմանագիր:

Բաժինը ստացել է 11-ը քաղաքացիներից դիմումներ, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք ենք տվել:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ

Մ. Մեսրոպյան

01.07.2019